ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Ի ԹՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՅՑ.

Առաջիկայ Դեկտեմբեր ամսում «Արարատ» ամսագրոյս չորեքտասաներորդ շրջանը լրանալով՝ 1882 թուականի Յունվարից պէտք է Հնգետասաներորդ (ԺԵ) շրջանն սկսի:

Ուստի խնդրում եմք մեր Գործակալներէն, որ փութան մինչեւ ներկայ տարւոյս Դեկտեմբերի 15ը ծանուցանել Տպ. Ժողովոյն «Արարատ»ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշտ հասցէներով:

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Ազգայինք, ինչպէս մինչեւ ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս եւ իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կփութան յառաջակայում եւ միշտ մի եւ նոյն զգացմամբք բաժանորդագրուիլ եւ օգնել սմին:

Արարատի թերթից քանակութիւնը, ուղղութիւնն ու բովանդակութեանց ծրագիրը եւ տարեկան բաժանորդագինը մի եւ նոյն կմնան:

Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովը խնդրում է Արարատի Գործակալներից, որ, ինչպէս կանխաւ իրենց գրուածէ, փութան մինչեւ նշանակած ժամանակը հասուցանել իրան յառաջիկայ 1882 թուականի Արարատի բաժանորդաց անուանական ճիշտ ցուցակը: